ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2019թ. թիվ 221-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
N 440-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «իզ» կետի և հաշվի առնելով «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 11.04.2019թ. թիվ 7/ՄՄ-239 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. դեկտեմբերի 28-ի «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 440-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) «8. Քիթ-կոկորդ-ականջաբանական ծառայություն, այդ թվում՝» մասի 8-րդ տողում «90.000» թիվը փոխարինել «120.000» թվով, իսկ 9-րդ, 10-րդ և 11-րդ տողերում «50.000» թիվը փոխարինել «90.000» թվով:

2) «17. Այլ ծառայություններ» մասը լրացնել նոր՝

17	Ալոպլաստիկ ցանցի արժեք՝ պետության կողմից փոխհատուցում չնախատեսող դեպքերում	1 դեպք	20.000
18	ՀՀ քաղաքացիություն չունեցող և ՀՀ քաղաքացու հետ ՔԿԱԳ-ում ամուսնություն չգրանցած հղիների առաջնակի հետազոտում և հաշվառում	1 դեպք	12.500

տողերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 17
ք.Վանաձոր